ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3691-Ա «26» սեպտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի Հ.4782-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սերյոժա Սահակյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի հ.4782-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և հատակագիծ թողարկելու մասին:

Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի հ.4782-Ա որոշման մեջ նշված՝ Ն.Չարբախի 6-րդ փողոցի հ.41 հասցեի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական իրքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի 1.1 ենթակետով, հաշվի առնելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.4743 և հ.2061 վկայագրերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-105658-24 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի «Երևան քաղաքի Ներքին Չարբախի 3-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.13 և 6-րդ փողոցի հ.41 հասցեներում գտնվող տնամերձ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով հատկացված հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու և 600քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ Սերյոժա Սահակյանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» հ.4782-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում, 2-րդ պարբերությունում և 1-ին կետում՝ «Սերյոժա Սահակյան» բառերը և հոլովաձևերը փոխարինել «Սերյոժա Սարգսի Սահակյան /ծնված 02.02.1994թ./» բառերով.

2) որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «8300.0քմ» բառերը փոխարինել «7660.80քմ» բառերով:

2. Հողամասերի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հողամասերի հատակագծերով:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ